ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՔՈՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Վարկի տրամադրման վերաբերյալ որոշման կայացման հարցում կարևոր դեր է խաղում հաճախորդի վարկային պատմությունը և վարկային ամփոփ սքոր գնահատականը: Որպես հաճախորդի սքոր գնահատական «ԱյԴի Բանկ» ՓԲԸ կողմից կիրառվում են Բանկի սեփական սքոր գնահատականը և ՖԱՅԿՈ սքորը:

Վարկային պատմությունը հաճախորդի պարտավորությունների վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն է, որն իրենից ներկայացնում է տվյալ անձի վարկային վարքագիծը՝ գործող և մարված պարտավորությունների, կատարված վճարումների, ինչպես նաև երբևէ տրված երաշխավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը: Դրական վարկային պատմություն ինարավոր է ձևավորել վարկերն առանց ուշացումների մարելու, դրանք նպատակային օգտագործելու դեպքում:

Սքոր գնահատականը հաճախորդի վարկային պատմության ուսումնասիրության հիման վրա ձևավորված վարկունակության և վարկարժանության թվային գնահատականն է:

ՖԱՅԿՈ սքոր գնահատականը հաճախորդի վարկային պատմության վերլուծության և վիճակագրական ուսումնասիրության արդյունքում հաշվարկված վարկարժանության թվային գնահատականն է:

Բանկի կողմից կիրառվող սեփական սքոր գնահատականը հաճախորդի աշխատանքային փորձի, եկամուտների մեծության, գործող վարկերի քանակի, նոր վարկային հայտեր ներկայացնելու հաճախականության, վարկային բեռի, վարկերի սպասարկման որակի, առկայության դեպքում վճարումների ուշացումների արդյունքում ձևավորված վարկունակության թվային գնահատականն է:

Հաճախորդի կողմից տրված համաձայնության հիման վրա՝ «ԱյԴի Բանկ» ՓԲԸ կողմից իրականացվում են հարցումներ «ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ-ից՝ վարկային պատմության վերաբերյալ՝ վերջինիս նախաձեռնությամբ նոր վարկի տրամադրման/գործող վարկի գումարի ավելացման հնարավորությունները դիտարկելու, երրորդ անձի/անձանց պարտավորությունների երաշխավոր լինելու, ինչպես նաև գործող դրամական պարտավորություններ ունենալու դեպքերում: Նոր վարկի տրամադրման/գործող վարկի գումարի ավելացման նպատակով կատարվող հարցումների քանակը մեծ հավանականությամբ նվազեցնում են հաճախորդի սքոր գնահատականը (Բանկի սքոր գնահատական և ՖԱՅԿՈ սքոր):

Գործող վարկերի մասով ժամկետանց պարտավորությունները բացառելով, նվազեցնելով առկա վարկերի մնացորդները և քանակները՝ դրանք մասամբ կամ ամբողջությամբ մարելով, ինչպես նաև ապահովելով տրված երաշխավորությունների մասով պարտավորությունների ժամանակին կատարումը՝ հաճախորդը կարող է բարելավել իր վարկային պատմությունը և/կամ սքոր գնահատականը: